Հավելված N 2
ՀՀ կառավարության 2024 թվականի
հոկտեմբերի 24-ի N 1700 - Ն որոշման

«Հավելված N 5
ՀՀ կառավարության 2023 թվականի
սեպտեմբերի 28-ի N 1666-Ն որոշման

ՀԱՆՐԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ (ԲԱՑԱՌՈՒԹՅԱՄԲ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ) ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԱՆՑ ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ԵՎ ԱՅԴ ՄԱՐՄԻՆՆԵՐԻՆ ՍՊԱՍԱՐԿՈՂ ԱՎՏՈՄԵՔԵՆԱ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՓՈԽԱՐԵՆ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՏԵՍՄԱՆ ՆՈՐՄԱՆԵՐԸ ԵՎ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ԿԱՐԳԸ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՆԱԽԱՏԵՍՄԱՆ ԿԱՐԳԸ

1. Հանրային իշխանության մարմինների (բացառությամբ տեղական ինքնակառավարման մարմինների) պաշտոնատար անձանց ծառայողական և այդ մարմիններին սպասարկող ավտոմեքենա հատկացնելու փոխարեն փոխհատուցումը նախատեսվում, փոխհատուցման ծախսը հաշվարկվում և Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով համապատասխան միջոցները հատկացվում են սույն հավելվածով սահմանվող նորմաներին և կարգին համապատասխան:

2. Հանրային իշխանության մարմինների պաշտոնատար անձանց ծառայողական ավտոմեքենա և այդ մարմիններին սպասարկող ավտոմեքենա հատկացնելու փոխարեն տվյալ մարմնի ղեկավարի առաջարկությամբ կարող է նախատեսվել տրանսպորտային ծախսերի փոխհատուցում (այսուհետ՝ բազային փոխհատուցում)՝ աշխատանքային պարտականությունների կատարման նպատակով ուղևորափոխադրման տրանսպորտային ծառայության ձեռքբերման համար:

3. Բազային փոխհատուցման ծախսերը Հայաստանի Հանրապետության պետական բյուջեում նախատեսվում են հանրային իշխանության մարմինների կողմից իրականացվող համապատասխան ծրագրային միջոցառումների ծախսե-

ռում բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման 4239 - «Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ» հոդվածով՝ ուղևորափոխադրման տրանսպորտային ծառայության ձեռքբերման համար:

4. Յուրաքանչյուր մեկ միավոր ավտոմեքենայի փոխարեն հատկացվող բազային փոխհատուցման նորման նախատեսվում է սույն հավելվածին համապատասխան հաշվարկվող պահպանման բազային ծախսի հաշվարկային ցուցանիշի և տվյալ մարմնի համար սահմանված բազմապատիկ գործակցի արտադրյալի առավելագույնը 170%-ի չափով՝ հետևյալ բանաձևով.

Բազային փոխհատուցման տարեկան ծախսի նորման = պահպանման բազային ծախսի հաշվարկային ցուցանիշ x բազմապատիկ գործակից x հաշվարկային տոկոս (առավելագույնը 170%):

5. Բազային փոխհատուցման տարեկան ծախսի նորմայի հաշվարկման նպատակով պահպանման բազային ծախսի հաշվարկում օրական ծախսվող վառելանյութի ծավալը որոշվում է՝ հիմք ընդունելով հանրային իշխանության մարմիններին (բացառությամբ տեղական ինքնակառավարման մարմինների) սպասարկող ընդհանուր ավտոպարկում օգտակար ծառայության ժամկետում գտնվող և ծառայության ժամկետը լրացած ավտոմեքենաների կողմից սպառվող վառելանյութի օրական ծավալների միջին կշռված ցուցանիշը:

6. Բազային փոխհատուցման տարեկան ծախսի նորման մեկ հաշվարկային միավորի համար հաշվարկվում է պահպանման բազային ծախսի հաշվարկային ցուցանիշի և հաշվարկման տոկոսի արտադրյալը դեպի վերև կլորացնելու միջոցով:

7. Առաջիկա տարվա պետական բյուջեի նախագծում նախատեսելու նպատակով բազային փոխհատուցման գումարը վերահաշվարկվում է ըստ սույն հավելվածին համապատասխան հաշվարկվող պահպանման բազային ծախսի հաշվարկային ցուցանիշի վերահաշվարկված արժեքի:

8. Բազային փոխհատուցման համար հատկացված միջոցների հաշվին մարմնի ղեկավարի լիազորությունների կամ մարմնի կանոնադրական գործա-

ռույթների իրականացման նպատակով տվյալ մարմնի աշխատակիցների տրանսպորտային փոխադրումն իրականացվում է տվյալ մարմնի կողմից գնման ընթացակարգերին համապատասխան ձեռք բերված ուղևորափոխադրման տրանսպորտային ծառայության միջոցով:

9. Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով առանձին մարմինների պահպանման ծախսերում նախատեսվող բազային փոխհատուցման ծախսերը հաշվարկում են բյուջետային ֆինանսավորման հայտով ներկայացված քանակով ավտոմեքենաների համար, բայց ոչ ավելի, քան տվյալ մարմնի ավտոմեքենաների սահմանաքանակը:

10. Բազային փոխհատուցման շրջանակներում ուղևորափոխադրման տրանսպորտային ծառայությունից օգտվելու և ծախսերի հաշվառման պայմանները սահմանվում են տվյալ մարմնի ներքին կանոնակարգերով:

11. Բազային փոխհատուցման շրջանակներում ուղևորափոխադրման տրանսպորտային ծառայությունից օգտվելու իրավասություն ունեցող ստորաբաժանումների կամ անձանց (պաշտոնների) շրջանակը սահմանվում է տվյալ մարմնի ղեկավարի կողմից ընդունված ներքին իրավական ակտով:

12. Բազային փոխհատուցումն իրականացվում է տվյալ մարմնի գլխավոր քարտուղարի (աշխատակազմի ղեկավարի) անհատական իրավական ակտի հիման վրա: Այն մարմիններում, որտեղ առկա չէ գլխավոր քարտուղարի պաշտոն, բազային փոխհատուցումն իրականացվում է օրենսդրությամբ նախատեսված համապատասխան պաշտոնատար անձի անհատական իրավական ակտի հիման վրա, իսկ այն տեսչական մարմիններում, որտեղ առկա չէ գլխավոր քարտուղարի պաշտոն՝ տեսչական մարմնի ղեկավարի անհատական իրավական ակտի հիման վրա:»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

25.10.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ